

ԱՐԳԵՆՏԻՆԱԶԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՈՒՆԻՑ (1950-ԱԿԱՆ ԹԹ.)

Բանայի բառեր – արգենտինահայ համայնք, ձևավորում, համագործակցություն, համայնքային կազմակերպություն, թվաքանակ, առկա խնդիրներ, կրոնական կառույց, մշակութային միություն, գործունեության ոլորտներ:

Հայերի մուտքը Արգենտինա: Հայտնի է, որ առաջին հայ գաղթականները Լատինական Ամերիկայի երկրներում բնակություն են հաստատել XIX դարի ընթացքում, սակայն հարկ է փաստել, որ այդ տարածաշրջանում հայերի առավել ստվար զանգվածներ հայտնվել են ավելի ուշ՝ 1920-1930-ական թվականներին¹:

Արգենտինայում հայերը հաստատվել են հիմնականում XX դարի սկզբին՝ 1909 թ. կիլիկյան ջարդերից, 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրականացված եղեռնից հետո: Մեծ թվով հայեր տեղափոխվել են այս երկիր հատկապես 1922-1930 թթ.՝ Կիլիկիայի հայաթափումից հետո²: Այդ իսկ պատճառով Արգենտինայի հայության շրջանում նկատելի թիվ են կազմում մարաշցիները, այնթապցիներն ու հաճընցիները: Մինչ նշված ողբերգական իրադարձություններն Արգենտինայում բնակվում էին ընդամենը 100-150 հայեր³: Հետագայում արգենտինահայ գաղութը շարունակեց աճել՝ ի հաշիվ Եվրոպայի և Ասիայի հայ գաղութներից այստեղ տեղափոխվածների:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգաբարձության տվյալներով՝ 1942-1943 թթ. հայերի թիվն Արգենտինայում կազմել է 19 հազար: Հայերի հոսքն Արգենտինա մեծ չափեր է ընդունել Երկրորդ աշխարհամարտից հետո: Շուրջ 10.000 հայեր են գաղթել Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից և Ֆրանսիայից, 1000՝ Ռումինիայից ու Բուլղարիայից, ևս 4.000՝ Թուրքիայից⁴:

Համայնքի ձևավորումը: Գաղթականների ավելացումը նպաստել է արգենտինահայ համայնքի կազմավորմանը: Արգենտինայի հայ համայնքի ծննդյան օրը կարելի է համարել 1920 թ. մայիսի 29-ը, երբ դաշնակցական և հնչակյան պարագլուխները հեռագիր են ուղարկել Ռիո դե ժանեյրոյում Հյուսիսային Ամերիկայի հայ գործերի դեսպան, դոկտոր Էսյեն Բրազիլին՝ հայտարարելով «իրենց անկախությունը հյուսիսամերիկյան հայկական հա-

¹ ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 57:

² <https://argentina.mfa.am/hy/community-overview/>

³ Տե՛ս **Գասպարյան Ս.**, Միլոնքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 44:

⁴ <https://argentina.mfa.am/hy/community-overview/>

մայնքից»¹: 1920 թ. հուլիսի 4-ին հրապարակվում է Արգենտինայի հայ համայնքի կոալիցիոն ղեկավարության բանաձևը, որտեղ նշվում է հայկական կազմակերպության՝ «Արժենթինայի Հայ Ազգային Միության» («Union Nacional Armenia de la Argentina») ստեղծման, հյուսիսամերիկյան հայ համայնքից նրա անկախության և Հայաստանի կառավարության (այն է՝ դաշնակցական) կամ Արգենտինայում նրա պաշտոնական ներկայացուցիչների հետ ուղղակի կապերի ստեղծման մասին: Բացի այդ՝ նշվում է նաև հետևյալ անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու մասին՝ նվիրատվություններ, կամավորների հավաքագրում, դպրոցների, հիվանդանոցների, եկեղեցիների և այլն կազմակերպում, յոթ հոգուց բաղկացած համայնքի գործադիր խորհրդի ընտրություն: 1920 թ. հոկտեմբերի 17-ին Բուենոս Այրեսի ֆրանսիական ընկերության դահլիճում «Արժանթինի հայ Ազգային Միության» ասամբլեան հաստատում է բանաձևը և ընտրում համայնքի խորհուրդ²: Կազմակերպությունը, սակայն, երկար կյանք չունեցավ³:

1921 թ. դեկտեմբերին ստեղծվում է «Հայոց տուն» («Casa Armenia») համագաղութային կազմակերպությունը: Այն ավելի ուշ վերանվանվում է «Հայ գաղթության Կենտրոն»: Հայտարարվում է, որ բոլոր գաղթականները, անկախ նրանց կրոնական և քաղաքական հայացքների, կարող են դիմել այդ կազմակերպության օգնությանը: Կազմակերպության հատուկ հանձնաժողովի կազմած ծրագրում նշվում էր. «Արգենտինայի հայկական գաղութում պահպանել ազգային ինքնագիտակցությունը, կրոնը, կարիքավորներին ցուցաբերել նյութական օժանդակություն, կազմակերպել հոգևորական ծառայությունը, օգնել երեխաներին և երիտասարդներին կրթություն ստանալու գործում, բարելավել բժշկական օգնությունը և դեղանյութերի մատակարարումը, ապահովել նրանց բնակարանով, աշխատանքով և այլն»⁴: Կազմակերպությունը, որը պառակտվում է 1927 թ.՝ բաժանվելով երեք մասի, 1930 թ. դադարում է գոյություն ունենալուց⁵:

1923 թ. ստեղծվում է Արգենտինայի «Հայ կենտրոնը»⁶ (հայ եկեղեցու վարչական խորհուրդ), որը հաստատում է հայ եկեղեցու թեմական խորհրդի իշխանությունը՝ որպես տեղի համայնքային կյանքը համակարգող կենտրոն, ղեկավարում իրեն հարող կրթական, երիտասարդական, բարեսիրական, կանանց կազմակերպությունների գործունեությունը: Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հոգաբարձությունը, Բուենոս Այրեսում ունենալով թեմա-

¹ ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 58:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս **Մասթոսեան Վ.**, Նիթեր Արժանթինի հայ գաղութի պատմութեան // «ԲԵՀ», 1996, թիվ 1, էջ 106:

⁴ ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 58:

⁵ Տե՛ս **Մասթոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 106:

⁶ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 11-12, նույն տեղում, ց. 9, գ. 235, թ. 59:

կան վարչություն, փաստորեն հանդես էր գալիս որպես գաղութի վարչական կենտրոն: Սերված լինելով Հայ գաղութային կենտրոնից՝ նրանից ստացել էր «Հայ կենտրոն» անունը, որը կիրառվում է մինչև օրս: Այն ուներ մեծ գրադարան և ազգային երգչախումբ: «Հայ կենտրոն»-ում ընդգրկված էին քաղաքական, գաղափարական տարբեր կողմնորոշումների տեր կամ չեզոք հայեր¹: Այն ուներ իր սրահը և վարչական շենքեր: «Հայ կենտրոնը» և նրա բաժանմունքները ձգտում էին հեռու մնալ քաղաքականությունից՝ նպատակ ունենալով չվանել տարբեր կողմնորոշումների պատկանող մարդկանց և պահպանել երկրի իշխանությունների հետ չեզոք հարաբերություններ:

Կազմակերպությունը 1950-ական թվականներին ուներ շուրջ 3500-4000 համակիրներ²: Այն ղեկավարում էր Արմեն Բերգամալին, որը ապաքաղաքական անձ էր: Կառույցում ներկայացված էին քաղաքական ու գաղափարական տարբեր հոսանքների ներկայացուցիչներ, որոնք համագործակցում էին միմյանց հետ: Չնայած այս հանգամանքին և գործադրած բոլոր ջանքերին՝ կառույցին չէր հաջողվում ամբողջապես համախմբել համայնքը և դարձնել այն միասնական: Ժամանակ առ ժամանակ առաջ էին գալիս լուրջ տարաձայնություններ, և տեղի էր ունենում պայքար «Հայ կենտրոնը» գլխավորելու համար: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ ներհամայնքային պայքարը հավասարակշռված էր: Գաղութի բոլոր ներկայացուցիչները ձգտում էին դրսևորել և զգուշավորություն իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում:

«Հայ կենտրոնը» տարբեր ժամանակներում այս խորագրով հրատարակում էր շաբաթաթերթ, ամսագիր, երբեմն նաև՝ տարեգրքեր, որտեղ ներկայացվում էին եկեղեցական և մշակութային կյանքին վերաբերող տեղեկություններ: Հրատարակվում էին նաև Խորհրդային Հայաստանին վերաբերող նյութեր:

Կորդովայում և Ռոսարիոյում գործում էին «Հայ կենտրոն»-ի մեկական մասնաճյուղեր, որոնք ունեին իրենց դպրոցներն ու եկեղեցիները³:

Գաղութի ներսում պառակտումից խուսափելու համար «Հայ կենտրոն»-ի ղեկավարությունը որդեգրել էր խուսանավելու քաղաքականություն: Նրա կազմակերպած մշակութային որոշ միջոցառումների երբեմն ներկա էին լինում տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ: Գաղութում գործող համազգային տոնակատարությունների հանձնախմբի նախաձեռնությամբ ամեն տարի նշվում էր 1915 թ. եղեռնի հիշատակը, Մշակույթի ամիսը և Վարդանանց պատերազմի օրը, որոնց մասնակցում էին բոլոր կողմերի ներկայացուցիչները: «Հայ կենտրոն»-ի շրջանակներում գործում էին «Հայաստանյաց եկեղեցու երիտասարդական կազմակերպությունը», «Հայ

¹ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 7:

² Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև **Գասպարյան Մ.**, նշվ. աշխ., էջ 47:

³ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 7-8, 11-12:

եկեղեցասեր տիկնանց միությունը» և մի քանի այլ օժանդակ կազմակերպություններ¹:

Թվաքանակը: 1950-ական թվականներին Արգենտինայում բնակվում էին շուրջ 40.000-45.000 հայեր², որոնց հիմնական հատվածը (մոտ 30.000) կենտրոնացած էր Բուենոս Այրեսում և նրա շրջակայքում: Բավականաչափ հայեր էին բնակվում Կորդովա և Ռոսարիո քաղաքներում: Հայերի փոքրաթիվ խմբեր կային Մար դե Պլատայում, Տուկումանում, Մենդոսայում և այլ վայրերում: Հատկանշական է, որ տեղերում հայկական համայնքների ղեկավարության, եկեղեցու, անգամ մասնավոր անձանց կողմից փորձեր են արվել անցկացնելու հայ բնակչության մարդահամար: Այսպես, դեռևս 1952-1953 թթ. Արգենտինայի հայ եկեղեցու երիտասարդական կազմակերպությունը նման փորձեր կատարել է, սակայն բավարար միջոցներ և որակավոր կադրերի բացակայության պատճառով գործն ավարտին չի հասցրել³: Այնուհետև դրան ձեռնամուխ է եղել տեղի հայկական մամուլը հեռախոսագրքի նման քարտարան կազմելու միջոցով: Քարտարանն ընդգրկել էր շուրջ 10.000 ընտանիք, սակայն իրենց իսկ կազմողների խոստովանությամբ՝ շուրջ 2000-3000 հայկական ընտանիքներին առնչվող թվերը մոտավոր էին⁴: Դարաշրջանի սկզբից արգենտինյան կառավարությունը մարդահամարներ է անց կացրել, սակայն հրատարակվել են միայն 1936 թ. և մասամբ 1947 թ. տվյալները, որոնք, սակայն, նույնպես թերի են, քանի որ հայերի մի զգալի մասը Կիլիկիայից, Թուրքիայից ու Մերձավոր Արևելքի շատ շրջաններից գաղթի տարիներին արտասահմանյան շատ երկրներ, այդ թվում Լատինական Ամերիկա են գաղթել «թուրք», «սիրիացի», «լիբանանցի», «հույն» ազգության անվան տակ⁵, այն է՝ իբրև այն երկրի քաղաքացի, որտեղից ժամանել են: Այդ իսկ պատճառով տվյալ ժամանակաշրջանում Արգենտինայում բնակվող հայության մասին մենք կարող ենք նշել միայն մոտավոր թվեր:

Կազմակերպություններ: Արգենտինայում գործում էին բազմաթիվ կազմակերպություններ, որոնք միավորում էին համայնքի մեծ մասը: Արգենտինահայության ազգային կյանքը կազմակերպում էին քաղաքական, բարեգործական, հայրենակցական, մշակութային, երիտասարդական-մարզական շատ կառույցներ: Քանի որ երկրի օրենսդրությունը արգելում է օտար կուսակցությունների ստեղծումը, հայ ազգային կուսակցությունների տեղական կառույցները հայապահպանության գործը կազմակերպում էին իրենց հովա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 7-8, 11-12, Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 94, **Գասպարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 47-55:

² ՀԱԱ, ֆ. 709, ց. 1., գ. 80, թ. 6, Հայկական սփյուռք տարեգիրք, Երևան, 2009, էջ 230, **Գասպարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 44:

³ ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 57-58:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 80, թ. 19:

նու տակ գործող մշակութային և մարզական միությունների, պարբերականների միջոցով: Համայնքի կենտրոնական մարմինը Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգաբարձությունն էր՝ «Հայ կենտրոնը», որը համարվում էր համայնքի (ոչ պաշտոնապես) ներկայացուցիչն արգենտինյան իշխանությունների մոտ¹: Համայնքի գրեթե բոլոր անդամները մաս էին կազմում երկրում գործող քաղաքական, մշակութային, կրոնական բազմաթիվ կազմակերպությունների, սակայն միննույն ժամանակ 1950-ական թվականներին չկար մի կազմակերպություն, որը կարողանար միավորել բոլորին²:

Արգենտինայի հայ համայնքի կյանքում կարևոր տեղ ունեին հասարակական և հայրենասիրական կազմակերպությունները: 1910-ական թվականներին ստեղծվեցին առաջին համայնքային կազմակերպությունները: Այդտեղ գործող համասփյուռքյան կազմակերպություններից հնագույնը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն (ՀԲԸՄ) էր, որը ստեղծվել էր դեռևս 1911 թ. Բուենոս Այրեսում³: ՀԲԸՄ-ն 1924 թ. մասնաճյուղ էր հիմնել նաև Կորդովայում: Միության առաջին համաժողովին մասնակցել էին ընդամենը 47 հոգի, իսկ 1927 թ. այն արդեն գերազանցել է 1000-ը: 1928 թվականից այդ միությանը կից ստեղծվել էին «Հայ երիտասարդաց լիգան» և «Տիկնանց միությունը»⁴: ՀԲԸՄ-ի նպատակն էր «միավորել հայերին և ամրապնդել նրանց միջև հարաբերությունները, անկախ նրանց ունեցած քաղաքական հայացքների տարբերությանը, յուրաքանչյուր հայի զգացմունքների ու անձի իրավունքների պաշտպանության համար»⁵: Այն գոհողություններ էր հավաքում կարիքավորների համար, կազմակերպում կրոնական տարբեր ծեսեր՝ հարսանիքներ, նշանադրություններ, թաղումներ և այլն: Կազմակերպությունը սկզբնական շրջանում գործում էր շատ ակտիվ, սակայն ավելի ուշ կառույցի գործունեությունը աստիճանաբար նվազեց, քանի որ Արգենտինայի հայ համայնքում կարիքավոր հայերի քանակը հասավ նվազագույնի: ՀԲԸՄ-ն ուներ լավ գրադարան, աճող սերնդի համար կազմակերպում էր հայոց լեզվի դասընթացներ, տարատեսակ մշակութային միջոցառումներ⁶:

ՀՅԴ: ՀՅԴ-ն իր գործունեությունն Արգենտինայում սկսել է 1912 թ.⁷ «Հայ մշակութային միություն» (“Asociacion Cultural Armenia”) անվան տակ: Կազմակերպության կենտրոնը Բուենոս Այրեսում էր: Ձևավորվել էին երկու՝ «Եփրեմ» և «Շանթ» խմբեր: Կորդովայում կազմակերպվել էր կազմակերպու-

¹ ՀԱԱ, ֆ. 709, ց. 9. գ. 235, թ. 59:

² Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 156, թ. 5:

³ ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 320, թ. 2, **Մասթեռուեան Վ.**, Նիւթեր Արժանթինի հայ գաղութի պատմութեան, էջ 106:

⁴ ՀԱԱ. ֆ. 709, ց. 9. գ. 235, թ. 63:

⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 875, ց. 2, գ. 320, թ. 2-4:

⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 8-9:

⁷ Տե՛ս **Մասթեռուեան Վ.**, նշվ. աշխ., էջ 106:

թյան մասնաճյուղը՝ «Արծիվ» անվամբ¹: ՀՅԴ առաջին հրատարակությունը «Բողոքի ձայն» երկշաբաթաթերթին էր (1923-1924)²: 1931 թվականից ՀՅԴ-ն հրատարակում է «Արմենիա» վերնագրով թերթը: Սկզբում այն լույս էր տեսնում շաբաթը մեկ անգամ, իսկ 1954 թվականից՝ ամեն օր³: 1950-ական թվականներին ՀՅԴ-ն Արգենտինայում ուներ բազմաթիվ կազմակերպություններ, մասնաճյուղեր, դպրոցներ, ակումբներ, որտեղ տիրում էր ազգային մթնոլորտ: 1941 թ. Բուենոս Այրեսում հիմնադրվել է ՀՅԴ «Արմենիա» երիտասարդական միությունը, որը ծավալում էր հասարակական-քաղաքական, մշակութային, մարզական գործունեություն: Այն ուներ կենտրոնական վարչություն, մասնաճյուղեր Բուենոս Այրեսում և Կորդովայում, 1949 թվականից հրատարակում էր «Կամք» պարբերաթերթը⁴: Միության տարբեր մասնաճյուղեր ունեցել են նաև իրենց պարբերականները և ռադիոհաղորդումները:

ՀՅԴ հովանավորությամբ 1951 թ. Բուենոս Այրեսում ստեղծվել է «Արմենիա» մշակութային ընկերակցությունը⁵: Ի դեպ, այս անվամբ է կուսակցությունը գրանցված իրավական դաշտում: Այն ՀՅԴ առաքելություններն իրականացնող մարմին է, որն ունի մասնաճյուղ Կորդովայում: Ընկերակցության շրջանակներում գործում էին Հայ դատի հանձնախումբը, «Արմենիա» երիտասարդական միությունը, որը սերտորեն համագործակցում էր Հայկական մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) հետ: 1954 թվականից այն ունեցել է ռադիոժամ⁶:

Կառույցն իր հովանու տակ միավորում էր մի քանի հարյուր դաշնակցականների, որոնք այնքան էլ միասնական չէին, և անձնական շահերի բախման հետևանքով առաջանում էին տարբեր խմբակցություններ: Այն ջանում էր վերցնել իշխանությունը «Հայ կենտրոն»-ում⁷:

ՀՄԸՄ: Համայնքում գործող կազմակերպություններից էր 1927 թ. հիմնադրված ՀՄԸՄ-ն: Այն Արգենտինայի հայ համայնքում գործող մարզական կազմակերպություն էր, որին անդամագրված էին քաղաքական տարբեր հայացքների տեր, ինչպես նաև ապաքաղաքական անդամներ: ՀՄԸՄ-ն ուներ մեծ մարզադաշտ Բուենոս Այրեսում, որը «Հայ կենտրոն»-ի սեփականությունն էր: Միությունը հրատարակում էր «Նավասարդ» մար-

¹ ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 60-61:

² Տե՛ս **Սառթևաթեան Վ.**, նշվ. աշխ., էջ 110, *նույնի*՝ Հարաւային կողմն աշխարհի, Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, էջ 189:

³ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 14, **Սառթևաթեան Վ.**, Նիւթեր Արժանթինի հայ գաղութի պատմութեան, էջ 110:

⁴ Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 99, **Սառթևաթեան Վ.**, նշվ. աշխ., էջ 110:

⁵ Տե՛ս Հայկական սփյուռք տարեգիրք, էջ 231:

⁶ Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 99, <https://argentina.mfa.am/hy/community-overview/>

⁷ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 14:

զական-տեղեկատվական ամսագիրը¹:

Հայ օգնության միություն (Հայկական կարմիր խաչ): 1933 թ. Կարմիր խաչի իրավասության ներքո կազմակերպվում է Հայ օգնության միությունը (ՀՕՄ)², որն Արգենտինայում գործում էր իբրև առանձին կազմակերպություն: Այն, Բուենոս Այրեսից բացի, մասնաճյուղեր ուներ Կորդովայում և Ռոսարիոյում: Կառույցն ուներ շուրջ 1000 անդամ:

ՄԳՀԿ: Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը ևս Արգենտինայում իր գործունեությունը սկսել է 1912 թվականից: «Հնչակ» կուսակցության կենտրոնն էր «Շարժում մշակութային միությունը», որը հիմնադրվել է 1920 թ.: Իրավական ճանաչում ունի որպես «Շարժում» մշակութային միություն: Հրատարակել է Արգենտինայում առաջին հայատառ թերթը՝ «Արժենթինյան մամուլ» (1923-1924), իսկ 1937-1991 թթ.՝ «Շարժում» շաբաթաթերթը (հայերեն, իսպաներեն): Այն լուսաբանել է հայկական և միջազգային հասարակական-քաղաքական կյանքը, հաղորդել Հայաստանի, սփյուռքի և համայնքի մասին լուրեր, առանձին բաժնում զետեղել մշակութային բնույթի հոդվածներ: 1937-1986 թթ. գործել է նրա սեփական տպարանը: Ուներ իր ակումբը: Այս կազմակերպության հիմքում դրված էր հետևյալ գաղափարը. «Լատինական Ամերիկայի բոլոր երկրներում բնակվող հայերի ազգային ինքնագիտակցությունը, Հայրենիքի՝ Հայաստանի երեկվա, այսօրվա և բոլոր ժամանակաշրջանների կյանքի իմացության անհրաժեշտությունը»: «Շարժում»-ին կից գործում էին ուսանողական միությունը և «Մարո» կանանց խմբակը³:

Սահամանադիր Ռամկավար կոմիտեն իր գործունեությունն Արգենտինայում սկսել է 1919 թվականից: Ռամկավարները միավորված էին «Արշակ Չոբանյանի մշակութային միության» մեջ, որը հիմնադրվել էր 1920 թ.: Նրանք գործում էին «Հայ կենտրոն»-ի, ինչպես նաև ՀԲԼՄ Արգենտինայի մասնաճյուղի շրջանակներում: Մինչև 1959 թ. վերջերը ռամկավարներն Արգենտինայում տպագիր օրգան չունեին: Միայն 1960 թ. փետրվարին Բուենոս Այրեսում սկսեց լույս տեսնել «Սուրհանդակ» թերթը⁴:

«Առաջադիմական» տարրն Արգենտինայում իր գործունեությունը ծավալել է 1927 թ., երբ այստեղ հիմնադրվել է Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) մասնաճյուղը⁵: Տարբեր անվանափոխումներից հետո այն ստացել է «Արգենտինահայ մշակութային ընկերություն» անվամբ իրավական կարգավիճակ: Արգենտինահայ մշակութային միությունը հիմնվել է 1960 թ. Բուենոս Այրեսում, որն Արգենտինայի Համայնավար կուսակցության հայազգի

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 121, **Մատթեոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 111:
² ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 61:
³ Տե՛ս նույն տեղում, թ. 62, 121, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 98, **Դավաթյան Կ.**, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 279:
⁴ ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 62, **Գասպարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 51:
⁵ Տե՛ս **Մատթեոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 110:

անդամների և համակիրների կազմակերպությունն էր¹:

Հայ մշակութային միություն: Այս կազմակերպությունը քաղաքական առումով համարվում էր ամենամոտը Խորհրդային Հայաստանին: Այն շնորհակալ աշխատանք էր կատարում վերջինիս տնտեսական և մշակութային նվաճումները պրոպագանդելու, հայ երիտասարդության կապերը հայրենիքի հետ ամրապնդելու գործում: Միությունը ղեկավարում էր Կենտրոնական հանձնախմբը, և ուներ բազմաթիվ մասնաճյուղեր մայրաքաղաքի տարբեր մասերում: Կազմակերպում էր երիտասարդական փառատոներ, երեկոներ, սպորտային միջոցառումներ և այլն: Կազմակերպության գործունեությունը, սակայն, այնքան էլ ակտիվ չէր: Անդամների թիվը սակավ էր (շուրջ 250), որոնց մի մասը ձևական էր: Միությանը հարող շրջանակները մինչև 1959 թ. տպագրում էին «Հայ մամուլ» թերթը (1945-1950 թթ., 1955-1959 թթ., հայերեն, իսպաներեն, շաբաթը երկու անգամ), որի հրատարակությունը մի քանի անգամ արգելվել էր իշխանությունների կողմից²:

Արգենտինայի հանրապետության հայկական երիտասարդական Ֆեդերացիա: Այս կազմակերպությունը միավորում էր բավականին մեծ թվով հայ երիտասարդների, որոնք աշխատում էին նրա մասնաճյուղերում: Այն մեծ հեղինակություն էր վայելում համայնքում և համակիրն էր Խորհրդային Հայաստանի: Կառույցի կենտրոնական հանձնախումբը բաղկացած էր 15 անդամից: Կազմակերպությունն անցկացնում էր գեղարվեստական փառատոներ: Թեև կառույցի ղեկավարները քաղաքականապես լավ պատրաստված էին, այնուամենայնիվ զգացվում էր հայրենասիրական, մշակութային և քաղաքական միջոցառումներ անցկացնելու ձևերի ու ծրագրերի ընդլայնման անհրաժեշտություն: Ֆեդերացիան ժամանակ առ ժամանակ հայերեն և իսպաներեն հրատարակում էր «Երևան» թերթը (1950-1958): Ֆեդերացիայում ընդգրկված էին երիտասարդական մի քանի կազմակերպություններ: Այն ուներ մոտ 600 անդամ³:

Հայրենակցական միություններ: Հարավային Ամերիկայի հայ գաղութի կյանքում առանձնակի տեղ էին զրավում հայրենակցական միությունները: Արգենտինայի հայ համայնքում գործում էին բազմաթիվ հայրենակցական միություններ, որոնց համախմբման գլխավոր սկզբունքը նախկինում միևնույն բնակավայրից լինելն էր: Միությունների անդամներն ամեն կերպ փորձում են օգնել իրենց համերկրացիներին: Առավել կազմակերպված և աչքի ընկնող էին Մարաշի և Հաճնի հայրենակցական միությունները:

Հաճնի հայրենակցական միություն: Հաճնի միությունը հիմնադրվել էր 1915 թ., ուներ շուրջ 700 անդամ և սեփական մասնաշենք: Այն ղեկավարում

¹ Տե՛ս ՀԱԱ, ց. 1, գ. 80, թ. 9, **Մատթեոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 110, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 99, **Դալլաքյան Վ.**, նշվ. աշխ. էջ 279:

² ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 10-11, **Գասպարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 49:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 18-19:

էր գլխավոր հանձնախումբը, որն ուներ իրեն ենթակա բազմաթիվ խմբեր: 1955 թվականից այն գործում էր «Հաճրն տուն» կոչվող սեփական շենքում: Բուենոս Այրեսում էր գտնվում նաև Հաճրնի հայրենակցական միության կենտրոնական վարչության նստավայրը, որը 1933 թվականից հրատարակում էր «Նոր Հաճրն» տեղեկագիրը: Նրան կից գործում էր երիտասարդական միությունը: Հաճրնի միությունն իրականացնում էր հասարակական և մշակութային գործունեություն՝ համագործակցելով արտասահմանյան նմանատիպ կազմակերպությունների հետ, որոնց անդամները տարբեր քաղաքական հայացքների տեր մարդիկ էին: Կարևոր է նաև նշել, որ այս միության կենտրոնը գտնվում էր Բուենոս Այրեսում և միավորում էր արտերկրի բոլոր հաճրցիներին¹:

Մարաշի հայրենակցական միություն: Մարաշի հայրենակցական միությունը հիմնադրվել էր 1924 թ: Մարաշցիներն ունեին իրենց սեփական տարածքը: Միությունը ղեկավարում էր Կենտրոնական հանձնախումբը, որն ուներ իրեն ենթակա բազմաթիվ խմբեր, որոնցից կարելի է հատկապես առանձնացնել երիտասարդական հանձնախումբը: Միությունն իրականացնում էր մարզական, մշակութային և հասարակական գործունեություն: Այն ուներ շուրջ 800 անդամ և համագործակցում էր արտասահմանյան նմանատիպ միությունների հետ: Կառույցը ապաքաղաքական էր, սակայն միության ճնշող մեծամասնությունը դրական էր տրամադրված Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Միությունը հրատարակում էր «Մարաշ» տեղեկագիրը²:

Նշված հայրենակցական միություններից բացի՝ Արգենտինայում գործում էին նաև «Այնթափի», «Քեսապի», «Կոնիայի», «Կեսարիայի», «Ադանայի», «Խարբերդի», «Սեբաստիայի», «Միսի» և այլ հայրենակցական միություններ: Սրանք պակաս կազմակերպված էին և իրենց շարքերում ունեին քաղաքական տարբեր կողմնորոշումների 50-ից 150 անդամներ: Այս բոլոր միությունները ևս համագործակցում են արտասահմանում գործող նմանատիպ կառույցների հետ: Հարկ է նաև նշել, որ եղել են միություններ կամ կազմակերպություններ, որոնք գոյություն են ունեցել միայն թղթի վրա, ձևականորեն³:

Հայկական փորձագիտական թատրոնի գեղարվեստական խումբ: Այս կազմակերպությունը հայրենասիրական բնույթի էր և ուներ անկախ կարգավիճակ, բաղկացած է եղել 100 անդամից: Խմբի բոլոր անդամները համարվում էին պատվավոր: Ձևավորման հենց սկզբից այն ներկայացրել է թատերական բազմաթիվ հետաքրքիր ներկայացումներ՝ հնարավորություն ընձե-

¹ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 15-16, **Մատթեոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 110, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 98:

² ՀԱՍ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 15, **Մատթեոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 110:

³ ՀԱՍ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 15:

ռելով շատ երիտասարդների զարգացնել իրենց ստեղծագործական ունակությունները: 1956-1957 թթ. խմբի գործունեությունը գրեթե դադարել է¹:

Հայ-արգենտինական գրականագիտական ընկերակցություն: Կազմակերպությունը բաղկացած էր արգենտինահայ համայնքը ներկայացնող տարբեր մասնագետներից և ուսանողներից, ուներ շուրջ 200 անդամ: Ընկերությունը ստեղծվել է 1952 թ.: Նրա հիմնական գործառույթը տարատեսակ գիտական (հատկապես պատմական) համաժողովների կազմակերպումն էր: Այն ամեն տարի անցկացնում էր նաև ընկերական երեկոներ՝ ի պատիվ նոր շրջանավարտների: Նրա անդամները քաղաքական տարբեր հայացքների տեր հայեր էին (մեծիմասամբ ՀՅԴ կողմնակիցներ): Ընկերությունը ժամանակ առ ժամանակ հայերեն և իսպաներեն հրատարակում էր «Ատենետ» ամսագիրը, որտեղ տպագրվում էին Հայաստանի պատմության վերաբերյալ տեղեկություններ, գիտական նորություններ և գրական հավելվածներ²:

Ինչպես արդեն նշել ենք, Արգենտինայի հայ համայնքը հիմնականում կենտրոնացած էր Բուենոս Այրեսում և նրա արվարձաններում, սակայն ևս երկու քաղաքներում կային բավականին մեծ հայկական համայնքներ: Դրանք Կորդովան և Ռոսարիոն էին, որտեղ ևս գործում էին համայնքային բազմաթիվ կազմակերպություններ, եկեղեցիներ ու դպրոցներ³: Միայն Կորդովայում, որը Բուենոս Այրեսից հեռոտ երկրորդ ամենամեծ հայ բնակչություն ունեցող քաղաքն էր Արգենտինայում, բնակվում էին չորս հազար հայեր: Այստեղ հայերը հաստատվել էին 1910-ական թվականներին: 1925 թվականից այստեղ գործում էր Հայ առաքելական եկեղեցու հոգաբարձությունը՝ «Կորդովահայ գաղութային միություն» անունով: Կորդովայում էին հիմնվել Արգենտինայի առաջին՝ Ս. Գևորգ հայկական եկեղեցին (1926 թ.) և մեկ ավետարանական ժողովարան⁴: Այստեղի հայությունը քաղաքական կողմնորոշումների առումով նույնպես բաժանված էր մի քանի մասի: Կորդովայում գործող կառույցներից էր «Արգենտինայում բնակվող հայերի հայրենասիրական միությունը»: Միավորում էր համայնքի հայրենասիրական հատվածի մեծամասնությանը: Գործում էր նաև «Կորդովա քաղաքի հայ համայնքի միավորված երիտասարդություն» կազմակերպությունը, որը միավորում էր երիտասարդ հայրենասերների և «Կորդովայի հայ երիտասարդական ֆեդերացիայի» մասնաճյուղն էր: Ուներ շուրջ 150 անդամ: Հայրենասիրական հատվածում աշխատում էր նաև «Կանանց հանձնախումբը»:

Կարևոր նշանակություն ուներ «Անմահ Հայաստանի հիշատակին» ռադաիոհաղորդումը, որը ղեկավարվում էր մի խումբ խանդավառ երիտա-

¹ Տե՛ս ՀՍՍ, ֆ. 709, ց. 1, գ. 80 թ. 10-11:

² Տե՛ս նույն տեղում, թ. 19:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 15-16, **Մառթնոսեան Վ.**, Հարաւային կողմն աշխարհի, Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, էջ 117-132:

⁴ Տե՛ս նույն տեղում:

սարդների կողմից¹: Հաղորդումները յուրաքանչյուր շաբաթ հեռարձակում էր Կորդովա քաղաքի ռադիոկայանը: Կորդովայում էր գործում նաև «Հայ ազգային կենտրոն»-ի մասնաճյուղը: Այն այստեղ ուներ իր սեփական տարածքը, դպրոցը և եկեղեցին: Գործում էին նաև դաշնակցական կազմակերպությունների մասնաճյուղերը: Թեև վերջիններս այստեղ փոքրամասնություն էին, այնուամենայնիվ նրանք, օգտվելով համայնքի մյուս հատվածների միջև եղած տարաձայնություններից, կարողացել էին դառնալ մեծամասնություն Կորդովա քաղաքի «Հայ կենտրոն»-ի ղեկավարության մեջ²:

Ռոսարիոյում հայերը հաստատվել էին 1920-1930-ական թվականներին: Տեղի հայ համայնքը թեև չուներ միասնություն ու միակամություն, այնուամենայնիվ համախմբված էր տեղի «Հայ կենտրոն»-ի շուրջ: Գործում էր հայկական դպրոցը, որտեղ անց էին կացվում տարատեսակ միջոցառումներ³:

Մար դե Պլատայում հայերը բնակություն էին հաստատել 1950-ական թվականների վերջերին: Այստեղի ոչ մեծաքանակ հայերը (շուրջ 150 հոգի) ստեղծել էին «Համընդհանուր հայկական միություն» կազմակերպությունը, որը խիստ պահպանողական էր և չուներ քաղաքական ուղղվածություն⁴:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ 1950-ական թվականներին Արգենտինայի հայ համայնքում գործում էին բազմաթիվ ու բազմապիսի կազմակերպություններ: Թեև վերջիններս ունեին տարբեր ուղղվածություն, այնուամենայնիվ կարողանում էին որոշակիորեն համագործակցել «Հայ կենտրոն»-ի շրջանակներում: Հարկ է նաև նշել, որ արգենտինահայ համայնքի տարբեր կազմակերպությունների վրա մեծապես ազդում էր նաև սառը պատերազմը, քանզի համաշխարհային գերհզոր երկու բևեռների պայքարն անդրադառնում էր նաև տարբեր գաղափարներ դավանող կառույցների վրա, որը անջրպետ էր առաջացնում նրանց միջև: Կողմերի մրցակցությունը, հաճախ խորանալով, վերածվում էր թշնամանքի՝ պառակտելով ու թուլացնելով համայնքը: Սակայն պետք է նաև փաստել, որ այս մրցակցությունն ուներ դրական կողմ ևս, այն նպաստում էր համայնքային կազմակերպությունների զարգացմանն ու ուժեղացմանը:

Կրոնական կառույցներ: Արգենտինահայ համայնքում 1950-ական թվականներին գործում էին նաև կրոնական զանազան կազմակերպություններ՝ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդները (էջմիածնական թև), հայ կաթոլիկները և ավետարանչականները⁵:

Արգենտինայում բնակվող հայության ճնշող մեծամասնությունը 1950-

¹ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 16-17:

² Տե՛ս նույն տեղում, գ. 80, թ. 17:

³ Տե՛ս նույն տեղում, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 96:

⁴ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 17:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 17-18:

ական թվականներին Հայ առաքելական եկեղեցու հետևորդ էր: Այդ եկեղեցու հոգաբարձությունը Բուենոս Այրեսում ունենալով թեմական վարչություն փաստորեն հանդես էր գալիս որպես գաղութի վարչական կենտրոն:

1912 թ. Արգենտինա է ժամանել գաղութի առաջին հոգևորական Ս. Պաղտասար քահանա Պարասաթյանը: Նա 1912 թ. ապրիլի 19-ին մատուցել է առաջին Ս. Պատարագը¹: Վարձակալած տարածքում հիմնվել է եկեղեցի և եկեղեցական վարչություն: Հայաստանյաց առաքելական եկեղեցու հոգաբարձությունը 1930 թ. Արգենտինայում ստացել է պետական ճանաչում²:

Հայկական ամենահին եկեղեցին՝ Կորդովայի Ս. Գևորգը, կառուցվել է 1925 թ.: Ինչ վերաբերվում է Բուենոս Այրեսին, ապա այստեղ 1929 թ. հիմնվել է Վարագա Ս. Խաչ փայտյա մատուռը, որը 1945 թ. վերաշինվել է քարից: 1937 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա.-ն հիմնել է Հարավային Ամերիկայի թեմը³, որի կենտրոնը Բուենոս Այրեսն էր: 1938 թ. այդտեղ կառուցվել է Ս. Գրիգոր լուսավորիչ եկեղեցին⁴: Թեմի ենթակայության տակ էին Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի և Չիլիի առաքելական համայնքները:

Եկեղեցուն կից գործում էր «Հայ եկեղեցու երիտասարդներ» կազմակերպությունը՝ շուրջ 400 անդամով: Այն տարեկան անցկացնում էր 2-3 միջոցառում: Կանանց հանձնախումբը առանձնապես աչքի չէր ընկնում: Վերջինիս մասնակցությունը եկեղեցու գործերում հիմնականում կրում էր ձևական բնույթ⁵:

Կաթոլիկ հայեր: Հայ կաթողիկե համայնքն Արգենտինայում կազմավորվել է 1924 թ.⁶: 1950-ական թվականներին այս կրոնական ուղղության հայ հետևորդների թիվը հասնում էր մոտավորապես 3800-ի⁷: Ունեին երկու եկեղեցի Բուենոս Այրեսում և Կորդովայում⁸: Նրանք տարբերվում էին համայնքի մյուս ներկայացուցիչներից իրենց կրոնական մուլեռանդությամբ և իրենց հավատքը վեր էին դասում ազգային շահերից:

Տվյալ ժամանակահատվածում կաթոլիկ հայերը բաժանված էին քաղաքական երկու խմբերի, որոնցից մեկի առաջնորդները քաղաքական «հետադիմական» հայացքների տեր մարդիկ էին, իսկ մյուսը ղեկավարում էին Վենետիկի Մխիթարյանները: Կրոնական այս համայնքը հիմնադրել է արգենտինահայ գաղութի լավագույն դպրոցներից մեկը, որտեղ դասավանդել

¹ Տե՛ս **Մատթեոսեան Վ.**, Նիւթեր Արժանթինի հայ գաղութի պատմութեան, էջ 108:

² Տե՛ս նույն տեղում, էջ 106:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 98:

⁵ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 8-9:

⁶ Տե՛ս **Մատթեոսեան Վ.**, Հարաւային կողմն աշխարհի, Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, էջ 160:

⁷ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 15:

⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 9, գ. 235, թ. 64:

են որակավորում ունեցող (դիպլոմավորված) ուսուցիչներ¹:

Ավետարանչական եկեղեցի: Արգենտինայի հայ համայնքում գոյություն ունեին միմյանցից անկախ երկու ավետարանչական համայնքներ: Ավետարանչականների ամենահին հիշատակությունը վերաբերում է 1918 թվականին²: 1929 թ. այն բաժանվել է երկու մասի՝ Հայ Ավետարանական Եղբայրություն և Հայ Ավետարանական Ժողովական³: Նրանք ունեին գրեթե 1200 անդամ: Այս կրոնական ուղղվածության ներկայացուցիչները ևս իրենց հավատքը վեր էին դասում ազգային շահերից:

Հայ Ավետարանչական երկու եկեղեցիներից մեկը, որի ղեկավարները առաջնորդվում էին հայրենասիրական սկզբունքներով, ուներ շուրջ 300 հետևորդ, իսկ մյուս եկեղեցին, որի ղեկավարը ամերիկամետ էր, ուներ շուրջ 800 հետևորդ: Երկու համայնքներն ունեին իրենց տպագրական մարմինները⁴:

Փաստորեն կարող ենք արձանագրել, որ միմյանցից անկախ գործում էին ոչ միայն տարբեր կրոնական ուղղությունների հետևորդները, այլև միևնույն կրոնական ուղղությունների ներկայացուցիչները, որոնք տարաձայնություններ ունեին միմյանց հետ:

Դպրոց: Հայերի ձուլման գործընթացն Արգենտինայում չափազանց ուժեղ էր: Չնայած գաղութում առկա մեծ թվով մշակութային և այլ կազմակերպությունների գոյությանը՝ երիտասարդությունը հայերեն գրեթե չէր խոսում⁵: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 1950-ական թվականներին բազմահազարանոց համայնքում գործում էին ոչ մեծ թվով վարժարաններ, որտեղ սովորում էին փոքրաթիվ երեխաներ: Կրթական գործի կազմակերպումից, ուսուցիչների պակասից, դպրոցական շենքերի կազմակերպումից բացի՝ բավականին լուրջ խնդիր էր նաև հայկական դպրոցների համար աշակերտների հայթայթումը: Ծնողների մեծամասնությունը նախընտրում էր երեխաներին ուղարկել արգենտինյան դպրոցներ: Բացի այդ, աշակերտների անկանոն հաճախելիության պատճառով Արգենտինայում գործող հայկական նախակրթարաններն ու դպրոցները չէին կարողանում պատշաճ իրականացնել իրենց առաքելությունը:

Արգենտինայի հայ համայնքի ձևավորմանը զուգընթաց՝ եկեղեցիներին կից ստեղծվել էին մեկօրյա, ապա՝ ամենօրյա դպրոցներ: Դասավանդումն իրականացվում էր պետական և հայկական ծրագրերով: Հայկական կրթադաստիարակչական հոգևոր և բարեպիրական բազմաթիվ կազմակերպություններ գործում էին «Հայ կենտրոն»-ի անմիջական ենթակայության ներքո:

¹ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 15-17:

² Տե՛ս **Մատթեոսեան Վ.**, Նիւթեր Արժանթինի հայ գաղութի պատմութեան, էջ 108:

³ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 18:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս **Գասպարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 46:

Դրանք հիմնականում կենտրոնացած էին Բուենոս Այրեսում և նրա արվարձաններում: Դպրոցների ղեկավարման գործն իրականացնում էր «Դպրոցական խորհուրդը»¹: Յուրաքանչյուր դպրոց ուներ իր խորհուրդը, որը կազմակերպում և կառավարում էր գործընթացը:

Արգենտինայում գործող հայկական դպրոցներում հիմնականում աշխատում էին որակավորում չունեցող (անդիպլոմ) ուսուցիչներ: Դպրոցները եկեղեցիներին կից էին: Ինչպես եկեղեցիները, այնպես էլ դպրոցներն ունեին շենքեր, որոնք «Հայ կենտրոն»-ի սեփականությունն էին²:

Դպրոցները անմխիթար վիճակում էին: 1959 թ. վերջերին Բուենոս Այրեսի գաղութում սկսվել էր հանգանակություն, որի նպատակն էր երկրորդական վարժարանի շենք կառուցել³: Արգենտինահայ համայնքի ամենամեծ դպրոցը «Արսլանյան» վարժարանն էր⁴, որտեղ սովորում էին շուրջ 250 աշակերտներ: Բացի դրանից, Արգենտինայում գործում էին փոքր՝ այդ թվում Ֆլորեսի «Արծրունյան», Րաֆֆու անվան, Վալենթին Ալսենայի «Խրիմյան», «Մամիկոնյան», «Խաչիկյան», Լանուսի «Կիլիկյան-Լուսինյան», Սոլտաթիի «Սահակյան» վարժարանները և այլն: Զգացվում էր ուսուցիչների պակաս⁵:

1950-ական թվականներին ներսփյուռքյան տեղաշարժերի հետևանքով գաղութի կյանքը վերաշխուժացավ⁶: Նորեկները ձեռնարկեցին դպրոցական ցանցի վերակազմությունը: Այս գործում խթանող ուժ եղավ Վենետիկի Մխիթարյան միաբանության Ստեփան վրդ. Ֆերանյանը, որը յոթամյա պայքարից հետո 1956 թ. կարողացավ բացել գաղութի առաջին ամենօրյա վարժարանը՝ Մխիթարյանը: Երևույթը դարձավ վարակիչ, որից հետո 1960-ական թվականներին վերակազմվեցին ամենօրյա ևս մի քանի վարժարաններ⁷:

Արգենտինայի հայ համայնքում գործող տարբեր կազմակերպություններին և միություններին պատկանող դպրոցները մեծ գործ էին կատարում գաղութի հայ մանուկների և երիտասարդության կրթության և դաստիարակության ուղղությամբ:

Մամուլ: Արգենտինահայ համայնքը ներկայացնող յուրաքանչյուր խումբ ուներ իր թերթը կամ պարբերականը, որոնց մի մասը՝ ամենօրյա: 1950-ական թվականներին Արգենտինայում լույս էին տեսնում բազմաթիվ թերթեր, որոնք ներկայացնում էին տեղեկություններ արգենտինահայ համայնքի և Խորհրդային Հայաստանի վերաբերյալ: Առաջին հայերեն պարբերականը

¹ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 6:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս **Գասպարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 48:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս **Ղանալանյան Տ.**, Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին, Երևան, 2016, էջ 21, 56:

⁷ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 17, **Մատթեոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 109:

«Արժենթինյան մամուլ» շաբաթաթերթն էր, որը լույս է տեսել 1923-1924 թթ.¹:

«Արմենիա» թերթը (ՀՅԴ պաշտոնաթերթ) լույս էր տեսնում 1931 թվականից Բուենոս Այրեսում: 1954 թ. այն դարձել էր օրաթերթ՝ 1000 տպաքանակով², ուներ իր սեփական տպարանը, թողարկվում էր հայերեն և իսպաներեն՝ չորս էջով, որտեղ որոշակի տեղ էր հատկացվում ամերիկյան լրատվական գործակալությունների հաղորդումներին:

Արգենտինայում լույս տեսնող թերթերից էր «Հայ մամուլը», որը ներկայացնում էր համայնքի սոցիալիստական ուղղությունը և հետևում Հայկական մշակութային միության հրահանգներին: Թերթը լույս էր տեսնում հայերեն և իսպաներեն՝ չորս էջով, շաբաթը երկու անգամ և 1200 օրինակով: Այն նույնպես ուներ իր սեփական տպարանը³:

Նշված ժամանակաշրջանում Բուենոս Այրեսում հայերեն և իսպաներեն հրատարակվում էր «Շարժում» շաբաթաթերթը (1937-1991)՝ 700 օրինակ տպաքանակով, որը ՄԴՀԿ պաշտոնաթերթն էր⁴: Այն ևս ուներ սոցիալիստական ուղղվածություն, լուսաբանում էր հայկական և միջազգային հասարակական-քաղաքական կյանքը, տպագրում Հայաստանի, սփյուռքի և համայնքի մասին լուրեր, առանձին բաժնում զետեղում մշակութային վերաբերող հոդվածներ: 1937 թվականից մինչև 1986 թ. այն ուներ իր սեփական տպարանը:

«Հայ կենտրոն» հայալեզու ամսագիրը, որը Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգաբարձության պաշտոնաթերթն էր, լույս է տեսել Բուենոս Այրեսում 1932-1970 թթ.⁵:

«Մարաշ» պարբերականը (1954-1966), որը հրատարակվում էր Բուենոս Այրեսում՝ հայերեն և իսպաներեն, «Մարաշ» հայրենակցական միության պաշտոնաթերթն էր: Այն տպագրել է միության գործունեությունը լուսաբանող լուրեր, նաև աշխարհում ցրված մարաշցիներին վերաբերող տեղեկություններ⁶:

«Նոր Հաճըն» թերթը լույս էր տեսնում 1933 թվականից Բուենոս Այրեսում՝ հայերեն և իսպաներեն⁷: Այն Հաճընի հայրենակցական միության կենտրոնական վարչության պաշտոնաթերթն էր, տպագրում էր Հաճընի պատմությանը և սովորություններին վերաբերող նյութեր, Արգենտինայում և այլ գաղթավայրերում ապրող հաճընցիների մասին լուրեր, Հայաստանի Նոր Հաճըն ավանին նվիրված տեղեկություններ:

¹ Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 103:

² ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 13:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 14:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 14, *նույն տեղում*, ց. 9, գ. 235, թ. 61-62, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 98:

⁵ Նույն տեղում, էջ 104, **Մատթեոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 111:

⁶ Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 104:

⁷ ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 156, թ. 15, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 104:

1950-ական թվականներին Արգենտինայում լույս էին տեսնում նաև «Հայ Կեանք» շաբաթաթերթը (1950-1961), կաթողիկե համայնքի «Լա Ռեվիստա Արմենիա» ամսաթերթը (1929-1957, անկանոն), ՀՍՀՄ «Նավասարդ» ամսաթերթը (1953-1958), արգենտինահայ համալսարանականների «Կաճառ» պարբերաթերթը (1954-1956, 1957-1964), Հայ կենտրոնի «Մասիս» մանկական հավելվածը (1945-1955), Արմենիա Երիտասարդական Միության «Կամք» պարբերաթերթը (1949-1995), «Արժենթին» անկախ պարբերաթերթը (մոտավորապես 1927-1951)¹:

Ռադիո: Արգենտինայում գործում էին նաև հայկական մի քանի ռադիո հաղորդումներ: Դրանցից էր «Հայաստանի ձայն»-ը հաղորդումը, որը հեռարձակվում էր շաբաթը երկու անգամ «Ռադիո դել Պուերթո» ռադիոկայանով: Հաղորդումները հայրենասիրական բնույթի էին և նախատեսված էին արգենտինահայ համայնքի լայն շրջանակների համար: Ռադիոհաղորդումները հայկական երգերի ձայնագրությունների կարիք ունեին: Հեռարձակվող բոլոր հաղորդումների հիմքում հայկական երաժշտությունն էր: Ռադիոհաղորդումներով գերազանցապես հեռարձակվում էին հայ կատարողների համերգներ, որոնք չափազանց սիրված էին գաղութում²:

ՀՅԴ հովանու տակ գործում էին «Հայկական մշակութային լսարան»-ի հաղորդումները, որոնք հեռարձակվում էին ամեն կիրակի ժամը 14-ին «Էկսելսիոր» ռադիոկայանով: Հաղորդումները հիմնականում հայրենասիրական բնույթ ունեին, հեռարձակվում էր նաև հայկական երգ ու երաժշտություն³: Երկու ռադիոհաղորդումները ֆինանսավորվում էին գովազդներից ստացվող եկամուտների հաշվին:

Մշակույթ: Արգենտինահայ մշակութային կյանքը սկսել է ձևավորվել համայնքի կայացմանը զուգընթաց: 1950-ական թվականներին Արգենտինայում զանազան կազմակերպություններին կից հիմնվել և գործում էին բազմաթիվ երգչախմբեր, պարախմբեր, թատերախմբեր և այլն: 1950-ական թվականներից գործել է արգենտինահայ փորձառական թատրոնը⁴: 1956 թ. Արգենտինա տեղափոխված պոլսահայ թատերական գործիչներ Հ. Սնապյանը և Վարուժան Աճեմյանը Բուենոս Այրեսում կազմակերպել են Պոլսահայ հայրենակցական մշակութային միությունը, որն ունեցել է թատերախումբ⁵:

1929 թ. ստեղծվել է «Կոմիտաս» երգչախումբը (նախապես՝ «Մպենդիարյան» անունով), որին հովանավորում էր Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգաբարձությունը: Երգչախումբը հիմնականում ապահովում էր պատարագի երգեցողությունը Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարում:

¹ ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 314, թ. 4, **Մասթեռեսան Վ.**, նշվ. աշխ., էջ 111:

² ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 14:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 10, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 101-103:

⁵ Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 102:

Պարբերաբար հանդես էր գալիս հոգևոր և աշխարհիկ երգացանկով: 1959 թ. գաղութում նշվել է այդ երաժշտախմբի 30-ամյակը¹:

1957 թ. հայ երաժշտության բարեկամների հովանավորությամբ Բուենոս Այրեսում ստեղծվել է «Արաքս» երգչախումբը², որի երգացանկն ընդգրկում էր հայկական ժողովրդական, դասական ստեղծագործություններ: Այն ելույթներ է ունեցել Արգենտինայում և Ուրուգվայում, աչքի էր ընկնում կատարողական բարձր մակարդակով և սփյուռքահայ լավագույն երգչախմբերից էր:

Արգենտինահայ արվեստագետները մեծ ներդրում ունեին հայ մշակույթի պահպանման և զարգացման գործում: Ստեղծելով երգչախմբեր, պարախմբեր, թատերախմբեր՝ վերջիններս տեղացիներին ծանոթացրել են հայ արվեստին:

Զբաղվածություն: Արգենտինայում բնակվող հայերը 1950-ական թվականներին հիմնականում զբաղվում էին մանր ձեռնարկատիրությամբ՝ սպասարկման ոլորտ, առևտուր և այլն: Կային նաև խոշոր արդյունաբերողներ: Միևնույն ժամանակ Արգենտինայում ձևավորվել էր մտավորականություն, որն աշխատում էր տարբեր բնագավառներում՝ բժշկության, իրավաբանության, արվեստի, մամուլի և այլն: Հայերն աշխատում էին Արգենտինայի արդյունաբերական ձեռնարկություններում, պետական գանազան հիմնարկներում: Նրանցից ոմանք հասել էին տնտեսական բարձր դիրքերի, արդյունաբերական ձեռնարկությունների, խոշոր խանութների և առևտրական ընկերությունների տերեր էին: Արգենտինայում տնտեսապես ապահով հայեր շատ կային, սակայն միայն նրանցով դատել համայնքի վիճակի մասին խոսելիս ճիշտ չէր լինի:

Համայնքի առջև ծառայած խնդիրներ: Արգենտինահայ համայնքում 1950-ական թվականներին առկա էին բոլոր այն խնդիրները, որոնք բնորոշ են Հայկական սփյուռքին: Առաջնայիններից մեկը մայրենի լեզվի հարցն էր: Հատկապես երիտասարդների գերակշիռ հատվածը չէր տիրապետում մայրենի լեզվին և ամբողջությամբ ինտեգրվել էր արգենտինական հասարակությանը՝ աստիճանաբար հեռանալով իր արմատներից: Շատ էին խառնամուսնությունները: Չնայած այն հանգամանքին, որ համայնքում գործում էին բազմաթիվ կազմակերպություններ, ամենուրեք ստեղծվում էին մանր, հաճախ նաև թղթի վրա գոյություն ունեցող միություններ: Եվ այսպես գաղութը կոտորակվում էր, բաժանվում տարբեր մասերի՝ տասնյակ միություններով, վարչություններով, խորհուրդներով: Արգենտինահայ գաղութում ստեղծված բազմաթիվ միությունների մի մասը պայքարում էր իր հայրենակիցների դեմ՝ ջլատելով համայնքի ուժերը: Թեև Արգենտինայում ապրող հայերը մեծ

¹ ՀԱՍ, ֆ. 875, ց. 2, գ. 314, թ. 4:

² Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 103:

ջանքեր էին գործադրում հայրենասիրական իրենց նպատակները կյանքի կոչելու համար, այնուամենայնիվ միշտ չէ, որ դա նրանց հաջողվում էր: Այսպես, գաղութի հասարակական կյանքի հետ կապված էր Բուենոս Այրեսի հայերի միայն 20 տոկոսը: Այդ աշխատանքներին որոշակի խոչընդոտներ էին ստեղծում նաև տեղի կառավարական մարմինները, որոնք շատ դեպքերում արգելում էին միջոցառումները, փակում թերթերն ու կազմակերպությունները և այլն¹:

Հարկ է նշել, որ Արգենտինայի հայկական կուսակցությունների, հասարակական և հայրենասիրական կազմակերպությունների գործունեության հիմքում, անկախ նրանց գաղափարական ուղղությունների տարբերությանը, համայնքի ձևավորման օրից առաջադրված սկզբունքներն էին: Կուսակցությունների առաջնորդները ձգտում էին համայնքը չներքաշել իրենց միջկուսակցական պայքարի մեջ, այլ բարեգործական, մշակութային տարբեր միջոցառումների միջոցով փորձում էին ներգրավել նոր կողմնակիցներ: Ի դեպ, շատ հազվադեպ էր պատահում, որ միջկուսակցական և ներկուսակցական առանձնահատկություններն ու անհաշտությունները երևան էին գալիս մամուլի էջերում: Համայնքում գործող կազմակերպությունների վերլուծությունը մեզ թույլ է տալիս հանգել այնպիսի եզրակացության, որ Արգենտինայում հայերի ազգային ինքնության պահպանման համար գոյություն ունեին բոլոր հնարավորությունները: Սակայն, չնայած այդ հանգամանքին, կարող ենք փաստել, որ տվյալ ժամանակահատվածում արգենտինահայ համայնքը, աստիճանաբար կորցնելով իր ազգային դիմագիծը, թուլանում էր: Մեր կարծիքով՝ ազգային արժեհամակարգի պահպանումը տվյալ ժամանակահատվածում հնարավոր կլիներ միայն համայնքն ուժեղ և ազգասեր դեկավարության շուրջ միավորելու պարագայում:

Արա Հովհաննիսյան – Արգենտինահայ համայնքի պատմությունից (1950-ական թթ.)

Հոդվածը նվիրված է 1950-ական թվականների արգենտինահայ համայնքին: Ներկայացվում է հայերի տեղափոխությունն Արգենտինա, հայաշատ քաղաքները, նրանց մոտավոր թվաքանակը: Նկարագրվում է Արգենտինայի հայ համայնքի և համայնքային կազմակերպությունների ձևավորման գործընթացը: Նշվում է նաև բոլոր այն կրոնական ուղղությունների մասին, որոնք գոյություն ունեին Արգենտինայի հայ համայնքում ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու նշանակալի դերակատարման մասին արգենտինահայերի կյանքում: Հոդվածում ներկայացվում են նաև արգենտինահայ համայնքում գործող հայկական դպրոցները, համայնքային կազմակերպությունները և մամուլը, այն

¹ Տե՛ս Գասպարյան Ս., նշվ. աշխ., էջ 49:

ըլորտները, որտեղ իրենց գործունեությունն էր իրականացնում Արգենտինայում բնակվող հայերի հիմնական հասվածք:

Արա Օգաննիսյան – *Из истории армянской общины Аргентины (1950-е годы)*

Ключевые слова – Армянский центр, армянская община Аргентины, формирование, церковь, школа, имеющиеся проблемы, союз, культура, пресса, разногласия, организация, количество, занятость, сотрудничество

Статья посвящена армянской общине Аргентины в 1950-е годы. В начале статьи рассказывается о переселении армян в Аргентину, о городах, где проживает много армян, отмечается их приблизительное количество. Описывается процесс формирования армянской общины и общинных организаций в Аргентине. В статье также говорится о религиозных направлениях, которые существовали в армянской диаспоре Аргентины в исследуемый период. Отмечается значительная роль Армянской апостольской церкви в жизни армян Аргентины. В статье говорится об армянских школах и общинных организациях, которые действовали в Аргентине в 1950-е годы. Говорится также об армянских средствах массовой информации, которые существовали в Аргентине в то время. Обсуждаются все те проблемы, которые имели место в армянской общине Аргентины в 1950-е годы. В статье также рассказывается об основных сферах деятельности армян, проживающих в Аргентине. В результате подробного анализа в конце статьи делаются соответствующие выводы об армянской общине Аргентины в 1950-е годы.

Ara Hovhannisyan – *On the History of the Armenian Diaspora of Argentina (in 1950s)*

Key Words – Armenian center, Armenian community of Argentina, formation, organization, Church, school, existing problems, union, culture, press, disagreement, quantity, employment, collaboration

The article is dedicated to the Armenian community of Argentina in 1950s, the resettlement of Armenians to Argentina, the cities where many Armenians lived and their approximate numbers. The process of formation of the Armenian community and community organizations in Argentina is described. The article also refers to the religious trends that existed in the Armenian diaspora of Argentina, as well as the significant role of the Armenian Apostolic Church in the life of the Armenians in Argentina. The article refers to the Armenian schools, community organizations and press, the spheres in which the majority of Armenians living in Argentina were active. All the issues existing in the Armenian community of Argentina are discussed.

Ներկայացվել է 24.06.2021

Գրախոսվել է 28.06.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021